Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունիսի 3-ի N 798 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՈՒ ՋՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են տրանսպորտային միջոցներում և երկաթուղային ու ջրային տրանսպորտում գովազդի տեղադրման հիմնական պահանջները։

2. Տրանսպորտային միջոցների վրա, հաշվի առնելով ճանապարհային երթևեկության, ինչպես նաև հասարակական անվտանգությունը, գովազդ կարող է տեղադրվել՝

1) տրանսպորտային միջոցի տանիքի վրա, ընդ որում, եթե տեղադրվում են լրացուցիչ առարկաներ, ապա դրանց չափերը՝ երկարությունը չպետք է գերազանցի 1380 միլիմետրը, լայնությունը՝ 440 միլիմետրը, բարձրությունը՝ 370 միլիմետրը, իսկ գովազդային գրառումները և պատկերները պետք է իրականացվեն այդ առարկաների՝ թափքի երկայնական առանցքին զուգահեռ կողմերի վրա.

2) թեթև մարդատար ավտոմոբիլների, տրոլեյբուսների և ավտոբուսների (այդ թվում՝ միկրոավտոբուսների) թափքերի կողային մակերեսների վրա՝ մինչև լուսամուտների եզրերը.

3) բեռնատար ավտոմոբիլների, կցորդների, կիսակցորդների թափքերի (այդ թվում՝ ֆուրգոնների) կողային մակերեսներին.

4) մոտոցիկլների վառելիքի բաքերի և գործիքային արկղերի կափարիչների վրա։

3. Գովազդը չպետք է տեղադրվի տրանսպորտային միջոցի առջևի և հետևի մասերում ու վտանգավոր բեռներ փոխադրելու համար նախատեսված տրանսպորտային միջոցի վրա, ինչպես նաև չպետք է կատարել գրառումներ՝ թվանշաններ պարունակող բեռնատար ավտոմոբիլների, կցորդների, կիսակցորդների և ավտոբուսների (այդ թվում՝ միկրոավտոբուս-ների) թափքի հետնապատի վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրու-թյամբ կամ տեխնիկական կանոնակարգերով, կամ ստանդարտներով նախատեսված դեպքերի։

4. Գովազդի մակերեսը չպետք է գերազանցի տրանսպորտային միջոցի, որի վրա այն տեղաբաշխված է, թափքի ներկված մանրամասերի (դետալների) մակերեսի 50 տոկոսը։

5. Գովազդի նպատակով չեն կարող օգտագործվել տրանսպորտային միջոցի արտաքին լուսային սարքավորումները։

6. Տրանսպորտային միջոցների վրա կարող են տեղադրվել այնպիսի գովազդներ, որոնք իրենց գույնով և տեղադրման (փակցնելու) տեղով չպետք է նման լինեն հատուկ և օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների գունագծապատկերներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տրանսպորտային միջոցների ճանաչման նշաններին։

7. Գովազդի համար կարող են օգտագործվել լուսաանդրադարձնող էֆեկտներ ունեցող ծածկույթներ, նյութեր և տարրեր, բացառությամբ ճանապարհային երթևեկության կանոններով արգելված գույների և լուսաանդրադարձնող նյութերի։

8. Գովազդի տեղադրման արդյունքում չպետք է փակվեն կամ սահմանափակվեն վարորդի տեսադաշտը, տրանսպորտային միջոցի արտաքին լուսային սարքերը, հաշվառման համարանիշերը, թափքի համարը, նույնացման համարը, տեղեկատվական գրառումները և նշանները։

9. Երկաթուղային տրանսպորտում գովազդը տեղադրվում է բեռնատար վագոնների վրա, ինչպես նաև ուղևորատար վագոններում, բացի պատուհանների մակերեսներից։

10. Ջրային տրանսպորտում գովազդը տեղադրվում է՝

1) զբոսանավերի ներսում և կողային մակերեսների վրա.

2) բեռնանավերի և մոտորանավակների կողային մակերեսների վրա.

3) առագաստանավերի կողային մակերեսների և առագաստների վրա.

4) ջրացիկլների վառելիքի բաքերի վրա։

11. Չի թույլատրվում գովազդ տեղադրել ջրային տրանսպորտի տեղեկատվական գրառումների համար նախատեսված մասերի և պատուհանների մակերեսների վրա, ինչպես նաև նավակողերին, որոնց վրա չպետք է կատարվեն թվանշաններ պարունակող գրառումներ։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ